

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Լալա Գրիգորյան

*«Հոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի
ուսումնական ասիստենտ, ոստիկանության կապիտան»*

Հայրենական քրեական իրավունքում հանցագործություն կատարողը՝ որպես առանձին դերակատար, առանձնացել է հանցակցության ինստիտուտի շրջանակներում: Սկզբնական օրենսդրական ակտերում հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ հանցագործությունը կարող է կատարվել ոչ միայն մեկ, այլև մի քանի անձանց կողմից:

«Հ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 38 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ»:

Ելնելով կատարողի նշված սահմանումից և քր. օր.-ի համակարգային վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ քր. օր.-ի 38 հոդվածի 2-րդ մասի իմաստով կատարող չեն կարող համարվել անզգույշ հանցանք կատարած անձը, հանցագործության նախապատրաստություն կատարած անձը, ինչպես նաև հանցանքը միայնակ կատարած անձը:

Անզգույշ հանցանք կատարած անձը չի կարող համարվել հանցագործության կատարող, քանի որ քր. օր.-ի 37 հոդվածից բխում է, որ անզգույշ հանցագործություններում հնարավոր չէ հանցակցությունը, հետևաբար նաև հանցակիցների, այդ թվում՝ կատարողի առկայություն:

Գործող օրենսդրական կարգավորմամբ հանցագործության նախապատրաստություն կատարած անձը նույնպես չի կարող համարվել հանցագործություն կատարող, քանի որ քր. օր.-ի 38 հոդվածի 2-րդ մասում նշված՝ «անմիջականորեն կատարել է հանցանքը» ձևակերպումը ենթադրում է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացում¹, ինչը բացակայում է նախապատրաստության դեպքում²:

Քննարկվող հարցի կապակցությամբ Ի. Ա. Ռեբանեն գրել է. «Հանցագործության նախապատրաստության փուլում հանցակցության մասին խոսելն անիմաստ է. դրանով բացառվում է նաև նախապատրաստության փուլում կատարողի առկայությունը»³: Ռ. Գալիակբարովի կարծիքով, հանցագործության փաստացի կատարումը հնարավոր է այն պահից, երբ սկսվում է պաշտպանվող օբյեկտի դեմ ոտնձգութ-

¹ Այդ մասին տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի որոշումը ՎԲ-48/08 գործի վերաբերյալ, 30-րդ կետ:

² Այդ մասին տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը ԵԿԴ/0087/01/12 գործի վերաբերյալ, 30-րդ կետ:

³ Տե՛ս *Ребане И. А.* О соучастии на стадии предварительной преступной деятельности (вопросы квалификации) // О соучастии в преступлении: сборник статей / Отв. ред. К. Нигола, Тарту: ТГУ, 1985, էջ 7:

յուն¹: Շատ Մ. Ա. Շնեյդերի՝ «Միայն կատարողը կարող է իրականացնել այնպիսի արարք, որը պարունակում է ավարտված հանցագործության կամ հանցավործի հատկանիշներ»²:

Այն, որ հանցագործության նախապատրաստության փուլում հանցակցություն հնարավոր չէ, հաստատվում է նաև քր. օր.-ի 39 հոդվածի 4-րդ մասում ամրագրված հետևյալ դրույթով. «Կատարողի կողմից իրենից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չհասցնելու դեպքում մյուս հանցակիցները պատասխանատվություն են կրում հանցագործության նախապատրաստության կամ հանցավործին հանցակցելու համար»: Ու քանի որ այստեղ հղում չի արվում քր. օր.-ի 38 հոդվածին ուստի այս դեպքում «կատարող» և «հանցակից» հասկացությունները գործածվում են խիստ վերապահունով, քանի որ հանցանքը ավարտին չհասցրած անձը չի կարող համարվել կատարող (նա չի կատարել հանցագործության օբյեկտիվ կողմը, մասնավորապես՝ նախապատրաստության փուլում նույնիսկ չի էլ սկսել), իսկ մյուս անձինք չեն կարող համարվել հանցակիցներ (նրանք այլևս կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող չեն):

Ինչպես արդեն նշել ենք, քր. օր.-ի 38 հոդվածի 2-րդ մասի իմաստով կատարող չի կարող համարվել նաև հանցանքը միայնակ կատարած անձը: Ղա բխում է քր. օր.-ի 38 հոդվածի 1-ին մասի ձևակերպումից, ըստ որի՝ հանցագործության կատարող կարող է համարվել բացառապես հանցակից հանդիսացող անձը. «Կատարողի *հետ մեկտեղ* (ընդգծումը մերն է՝ Լ.Գ.) հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը»: Ինչպես նշել է Ֆ. Գ. Բուրչակը, հանցանքը միայնակ կատարելու դեպքում կատարողի դերի և գործառնությունների հարց չի բարձրացվում. այդ անձը պարզապես համարվում է հանցագործության սուբյեկտ³:

Ա. Վ. Ուշակովը գրել է, որ Ռուսաստանի քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածները հավասարապես նախատեսված են ինչպես միայնակ, այնպես էլ հանցակցության կազմում գործող անձանց համար⁴: Փաստորեն մենք գործ ունենք երկու հասկացությունների հետ՝ «հանցագործության սուբյեկտ» և «հանցագործության կատարող»: Հանցագործության սուբյեկտը քրեական պատասխանատվության տարիքի հասած, մեղսունակ, հանցանք կատարած ֆիզիկական անձն է, իսկ հանցագործության կատարողը, ի լրումն այս հատկանիշների, նաև հանցակցության կազմում գործող և հանցանքի օբյեկտիվ կողմն իրականացնող անձն է⁵: Թե՛ հանցակիցը և թե՛ միայնակ գործող անձը պետք է միաժամանակ ունենան հանցագործության սուբյեկտին վերագրվող բոլոր հատկանիշները⁶:

Քր. օր.-ի մի շարք հոդվածներում կարելի է հանդիպել այնպիսի ձևակերպումների, ինչպիսիք են «հանցանք կատարած անձ (անձինք)» (6-րդ, 7-րդ, 10-րդ, 13-16-րդ, 43-րդ, 72-74-րդ, 82-րդ, 107-րդ, 115-րդ հոդվածներ), «կատարած հանցանք» (8-

¹ Տե՛ս *Галиакбаров Р.* Особенности квалификации многосубъектных преступлений // Рос. юстиция. 2002, N 10, էջ 45:

² Տե՛ս *Шнейдер М. А.* Соучастие в преступлении по советскому уголовному праву. М., 1958, էջ 41-42:

³ Տե՛ս *Бурчак Ф. Г.* Соучастие: социальные, криминологические и правовые проблемы. Киев, 1986, էջ 137:

⁴ Տե՛ս *Ушаков А. В.* К вопросу о видах и формах соучастия и основаниях ответственности соучастников преступления // ВЮЗИ. Ученые записки. Выпуск XX. Часть 1 (Сборник статей аспирантов). М., 1970, էջ 174:

⁵ Տե՛ս *Цвиренко О. Л.* Исполнитель преступления как вид соучастника по уголовному праву Российской Федерации: Дис.... канд. юрид. наук. Тюмень, 2005, էջ 89:

⁶ Տե՛ս *Козлов А. П.* Соучастие: традиции и реальность. СПб., 2001, էջ 104:

րդ, 29-րդ, 30-րդ, 39-րդ հոդվածներ), «հանցանք կատարել» (17-րդ, 20-րդ, 22-րդ, 23-րդ, 26-րդ, 40-րդ, 60-րդ, 62-64-րդ, 67-րդ, 75-րդ, 97-րդ, 102-րդ, 165-րդ հոդվածներ):

Ակնհայտ է, որ, օրինակ, քր. օր.-ի 16 հոդվածը («Հանցանք կատարած անձանց հանձնելը») վերաբերում է ոչ միայն հանցագործության կատարողին, այլև հանցանքը միայնակ կատարած անձին, կամ քր. օր.-ի 20 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով՝ «երկու կամ ավելի հանցանք կատարելը» ձևակերպումը ներառում է նաև այն իրավիճակները, երբ համակցությունն ընդգրկում է հանցագործության նախապատրաստությունը, իսկ օրինակ՝ քր. օր.-ի 165 հոդվածի իմաստով՝ անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավել ասելով՝ պետք է հասկանալ նրան ոչ միայն որպես կատարող, այլև որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող ներգրավելը:

Փաստորեն, «հանցագործության սուբյեկտ» հասկացությունն իր ծավալով ավելի լայն է, քան «հանցագործության կատարող» հասկացությունը, քանի որ, բացի վերջինից, այն ներառում է նաև միայնակ գործող անձանց, անզգույշ հանցանք կատարած անձանց, հանցագործության նախապատրաստություն կատարած անձանց, ինչպես նաև կազմակերպչին, դրդիչին և օժանդակողին:

«Հանցագործության կատարող» և «հանցագործության սուբյեկտ» հասկացությունների հարաբերակցության հարցը հատկապես կարևորություն է ստանում այն դեպքում, երբ անհրաժեշտություն է առաջանում պարզելու, թե արդյոք կատարողը կարող է հանդես գալ նաև հանցակցությունից դուրս: Այդ հարցի վերաբերյալ քրեական իրավունքի տեսության մեջ միանշանակ մոտեցում չկա: Իր ուսումնասիրություններում նմանատիպ կարծիքի է հանգել նաև Ա. Պ. Կոզլովը՝ նշելով, որ կատարողին որպես ինքնուրույն գործող անձ ճանաչելու կամ չճանաչելու հարցի շուրջ միասնական մոտեցում չկա: Ըստ նրա՝ միայնակ գործող կատարողը և կատարող-հանցակիցը գործառական առումով միմյանցից չեն տարբերվում: Չնայած հանուն արդարության պետք է փաստել, որ ինքնուրույն հանդես եկող անձի գործունեության ուղորտն ավելի լայն է, քանի որ ինքն է լուծում նաև կազմակերպչական բնույթի խնդիրները, պլանավորում հանցանքի կատարման հետ կապված հարցերը, այնինչ հանցակցության դեպքում յուրաքանչյուր անձ ունի իր կոնկրետացված դերը: Այնուամենայնիվ պետք է նշել, որ ինքնուրույն հանդես եկող անձի գործունեության ուղորտը ընդլայնվում է հանցագործության մյուս փուլերի հաշվին, այսինքն՝ նա իրականացնում է նախապատրաստական աշխատանքներ, բայց կատարողի բուն գործառույթը՝ հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացումը, մնում է նույնը, ինչ հանցակցության ժամանակ է¹:

Այլ մոտեցում է դրսևորում Ի. Պ. Մալախովը, որն առաջարկում է հանցակցության կազմից դուրս բերել կատարողին, քանի որ մյուս հանցակիցները չեն իրականացնում հանցագործության օբյեկտիվ կողմը: Հանցակազմն առկա է միայն կատարողի արարքում. այն հանցակցին մեղսագրվում է այնքանով, որքանով վերջինս իր գործողություններով պայմանավորել կամ հեշտացրել է կատարողի կողմից դրա իրականացումը²:

Եթե անձը գործում է հանցակցության կազմում, ապա կատարողն այստեղ ակնհայտ է: Իսկ ինչ վերաբերում է հանցակցությունից դուրս գործող անձին, ապա նրան

¹ St' u *Козлов А. П.* Соучастие: традиции и реальность. СПб., 2001, էջ 111-112:

² St' u *Малахов И. П.* Соучастие в воинских преступлениях в свете общего учения о соучастии по советскому уголовному праву. Автореф. дис....канд. юрид. наук. М., 1960, էջ 14:

տարբեր կերպ են անվանում՝ ինքնուրույն գործող սուբյեկտ¹, ինքնուրույն գործող անձ², անձ, որը չի համարվում հանցակից (կատարող)³, հանցագործությանը միայնակ մասնակցող անձ⁴, միայնակ գործող անձ⁵, ինքնուրույն կատարող⁶, փաստացի կատարող, որը օժտված է սուբյեկտի բոլոր հատկանիշներով⁷:

Մի շարք հեղինակներ էլ հավասարության նշան են դնում հանցագործության կատարողի և միայնակ գործող անձի միջև՝ իրենց տեսակետը հիմնավորելով միջնորդավորված կատարողի առկայությամբ: Այսպես օրինակ՝ Օ. Կ. Գամկրելիժեն կարծում է, որ հանցագործություն կատարողը միայն հանցակցության կազմում չէ, քանի որ կա նաև միջնորդավորված կատարողը⁸: Սրան հակառակ՝ Ա. Վ. Ուշակովը նշում է, որ կատարողը հանցակիցներից մեկն է, իսկ միջնորդավորված կատարումը հանցակցություն չի ձևավորում, ուստի դրա առկայությունը հանցակցությանը վերաբերող հոդվածում սխալ է թվում⁹: Նմանատիպ կարծիքներ են արտահայտել նաև այլ հեղինակներ¹⁰:

Նշված հարցի կապակցությամբ մեր մոտեցումը հետևյալն է. հանցագործության միջնորդավորված կատարողի օրենսդրական սահմանումը պետք է տրվի հանցակցության ինստիտուտից դուրս՝ միաժամանակ չբացառելով հանցակցության կազմում հանցագործության միջնորդավորված կատարման հնարավորությունը:

Այս մոտեցումը հիմնավորվում է հետևյալով: Գործնականում հանցագործության միջնորդավորված կատարումը հնարավոր է ինչպես հանցակցության կազմում, այնպես էլ հանցակցությունից դուրս: Օրինակ, եթե դրդիչը դրդում է կատարողին կատարել հանցանք, իսկ վերջինս դրա կատարման նպատակով օգտագործում է քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի, ապա առկա է հանցագործության միջնորդավորված կատարում հանցակցության կազմում: Սակայն եթե հանցագործության սուբյեկտ համարվող անձը, գործելով միայնակ, հանցագործությունը կատարում է քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի օգ-

¹ Տե՛ս *Кузнецова Н., Кудрявцев В.* Квалификация соучастия в преступлении // Советская юстиция. 1962, № 19, էջ 15:

² Տե՛ս *Козлов А. П.* Соучастие: традиции и реальность. – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2001, էջ 104:

³ Տե՛ս *Кригер Г. А., Кригер Г. Л.* Актуальные проблемы соучастия в советском уголовном праве // Правовые исследования. Сборник научных статей, посвященный 70-летию Тинатин Васильевны Церетели. Тбилиси, 1977, էջ 112:

⁴ Տե՛ս *Иванов В.* Добровольный отказ от совершения преступления при соучастии // Советская юстиция. 1992, № 23-24, էջ 10:

⁵ Տե՛ս *Безуглов В.* Является ли двусторонняя субъективная связь обязательным признаком соучастия? // Юридические записки Ярославского государственного университета им. П. Г. Демидова. Вып. 2 / Под ред. В. Н. Карташова, Л. Л. Кругликова, В. В. Бугаева. Ярославль, 1998, էջ 261:

⁶ Տե՛ս *Макарова Т. Г.* Уголовно-правовая характеристика соучастия в преступлении со специальным субъектом / Под ред. В. С. Прохорова. СПб.: Нестор, 2002, էջ 48:

⁷ Տե՛ս *Савельев Д. В.* Преступная группа: вопросы уголовно-правовой интерпретации и ответственности. Монография. Екатеринбург, 2002, էջ 33:

⁸ Տե՛ս *Гамк्रेлидзе О. К.* Соисполнительство и посредственное исполнительство преступления по советскому уголовному праву. Автореф. дис...канд. юрид. наук. Тбилиси. 1973, էջ 6-7:

⁹ Տե՛ս Уголовное право России. Общая часть: Учебник / Отв. ред. Б. В. Здравомыслов. М., 1996, էջ 260:

¹⁰ Տե՛ս *Арутюнов А.* Проблемы ответственности соучастников преступления // Уголовное право. 2001, № 3, էջ 3-4, *Назаренко Г. В.* Квалификация особых случаев соучастия: соучастие и невменяемость // Известия ВУЗ. Правоведение. 1995, № 3, էջ 95:

տագործելու միջոցով, ապա առկա է հանցագործության միջնորդավորված կատարում հանցակցությունից դուրս: Տվյալ իրավիճակը չի կարող համարվել հանցակցություն, քանի որ բացակայում է հանցակցության պարտադիր հատկանիշներից մեկը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ այդ հատկանիշն «...արտահայտվում է այն բանում, որ հանցագործությունը պետք է կատարեն հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու կամ մի քանի անձ: Հանցակիցներ կարող են լինել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք: Հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը»¹:

Սակայն գործող օրենսդրական կարգավորման պարագայում ստացվում է, որ հանցագործության միջնորդավորված կատարումը հնարավոր է միայն հանցակից հանդիսացող կատարողի կողմից, քանի որ միջնորդավորված կատարման մասին նշումը բովանդակվում է հենց կատարողի օրենսդրական սահմանման մեջ: Կարծում ենք՝ նման օրենսդրական կարգավորումն անընդունելի է, քանի որ հանցակցությունից դուրս հանցագործության միջնորդավորված կատարման իրավիճակների կապակցությամբ առկա է օրենսդրական բաց, որը լրացնելու համար անհրաժեշտ է հանցագործության միջնորդավորված կատարման օրենսդրական սահմանումը դուրս բերել հանցակցության ինստիտուտից՝ միաժամանակ չբացառելով, որ հանցագործության միջնորդավորված կատարումը հնարավոր է նաև հանցակցության կազմում:

Քննարկվող հարցի կապակցությամբ Վ. Գ. Ուսովն առաջարկում է կատարողի հասկացությունից դուրս հանել հանցագործության միջնորդավորված կատարումը և այն կարգավորել առանձին նորմով՝ հանցակիցների տեսակները սահմանող հոդվածում²: Նման մոտեցմանը դժվար է համաձայնել, քանի որ այս դեպքում այն դուրս չի հանվի հանցակցության ինստիտուտից, և դրանով մեզ հետաքրքրող խնդիրը չի լուծվի:

Որոշ հեղինակներ էլ առաջարկում են հանցակցության ինստիտուտից դուրս բերել ոչ միայն հանցագործության միջնորդավորված կատարումը, այլև կատարողի հասկացությունն ընդհանրապես: Այսպես Ա. Վ. Ուշակովը, Ս. Վ. Աֆինոգենովը առաջարկում են ընդարձակել կատարողի գործունեության սահմանները, և կատարող համարել ինչպես հանցակցության կազմում գործող, այնպես էլ միայնակ հանդես եկող անձին³: Ըստ Ա. Պ. Կոզլովի՝ կատարողին անհրաժեշտ է դուրս բերել հանցակցության ինստիտուտից, կատարող համարել ինչպես առանձին, այնպես էլ հանցակցության կազմում գործող անձանց՝ դրա հասկացության մեջ ներառելով նաև հանցագործության միջնորդավորված կատարումը⁴:

Մեր կարծիքով, ճիշտ չի լինի քր. օր.-ում օգտագործել «կատարող» միևնույն տերմինը ինչպես հանցակցության կազմում գործող, այնպես էլ միայնակ գործող անձանց բնութագրելու համար: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի որոշումը ՎԲ-48/08 գործի վերաբերյալ, 28-րդ կետ:

² Տե՛ս *Усов В. Г.* Понятие и ответственность исполнителя преступления. Дисс....канд. юрид. наук, Рязань, 2007, էջ 91-92:

³ Տե՛ս *Афиногенов С. В.* Соучастие в преступлении (понятие, виды, формы). Автореф. дисс... канд. юрид. наук. М., 1991. էջ 9, *Ушаков А. В.* Групповое преступление и смежные с ним формы преступной деятельности. Калинин. 1978, էջ 51-56:

⁴ Տե՛ս *Козлов А.П.* Соучастие: традиции и реальность. – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2001, էջ 103-106:

4-րդ մասը սահմանում է, որ իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով: Իսկ հանցակցության կազմում գործող կատարողն իր հատկանիշներով էապես տարբերվում է միայնակ հանցանք կատարող անձից: Ինչպես արդեն նշել ենք, միայնակ հանցանք կատարող անձը կարող է կատարել անզգույշ հանցանք կամ հանցագործության նախապատրաստություն, ինչը չի կարելի ասել հանցակցության կազմում գործող կատարողի մասին:

Կարծում ենք՝ խնդիրը պետք է լուծվի ոչ թե «կատարող» հասկացության ծավալի ընդլայնման, այլ քր. օր.-ում «հանցագործության կատարում» հասկացությունն օրենսդրորեն ամրագրելու միջոցով: Դա մի կողմից թույլ կտա խուսափել տարբեր հասկացությունների բնութագրման համար միևնույն տերմինն օգտագործելուց, իսկ մյուս կողմից՝ կբացառի «հանցագործություն կատարած անձ» և «կատարող», «հանցագործության կատարում» և «կատարողի արարք» հասկացությունների հնարավոր շփոթումը:

Քանի որ անձի կողմից հանցագործության կատարումը նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքն է, կարծում ենք՝ «հանցագործության կատարում» հասկացությունն անհրաժեշտ է տալ հենց քրեական պատասխանատվության հիմքը ամրագրող քր. օր.-ի 3 հոդվածում, առավել ևս, որ այդ հոդվածի գործող խմբագրությունը ճիշտ համարել չի կարելի:

Այսպես՝ քր. օր.-ի 3 հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»: Այդ դրույթի տառացի մեկնաբանությունից բխում է, որ քրեական պատասխանատվության հիմք է միայն հանցագործության կատարողի կամ միայնակ գործող անձի կողմից ավարտված հանցագործության կատարումը, քանի որ հանցագործության կազմակերպիչ, դրդչի, օժանդակողի արարքները, ինչպես նաև հանցագործության նախապատրաստությունը և հանցափորձը չեն պարունակում քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Վերոշարադրյալը վկայում է քր. օր.-ի 3 հոդվածում քրեական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքների շրջանակները ընդլայնելու անհրաժեշտության մասին: Օրինակ՝ Բելառուսի Հանրապետության քր. օր.-ի 10 հոդվածը («Հանցագործությունը որպես քրեական պատասխանատվության հիմք») սահմանում է. «Քրեական պատասխանատվության հիմք է սույն օրենսգրքով նախատեսված, մեղավորությամբ կատարված արարքը՝

- 1) ավարտված հանցագործության տեսքով,
- 2) հանցագործության նախապատրաստության տեսքով,
- 3) հանցագործության փորձի տեսքով,
- 4) հանցագործությանը հանցակցելու տեսքով»¹:

Կարծում ենք՝ քրեական պատասխանատվության հիմքի համանման օրենսդրական սահմանումն անհրաժեշտ է ամրագրել նաև հայրենական քրեական օրենսդրության մեջ, սակայն մի վերապահումով: Հանցակցությանը վերաբերող ձևակերպման մեջ անհրաժեշտ է հատուկ նշել, որ հանցագործության կատարում է համարվում միայն ավարտված հանցագործությանը և հանցափորձին հանցակցելը՝ նախապատրաստության փուլում հանցակցությունը օրենսդրորեն բացառելու նպատակով: Ըստ այդմ առաջարկում ենք քր. օր.-ի 3 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

¹ Ст' u Уголовный кодекс Республики Беларусь, 1999 г., СПб., 2001, էջ 87:

«Հողված 3. Քրեական պատասխանատվության հիմքը

1. Քրեական պատասխանատվության հիմքը հանցագործության կատարումն է:

2. Հանցագործության կատարում է համարվում՝

1) ավարտված հանցագործության կատարումը,

2) հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի կատարումը,

3) ավարտված հանցագործությանը կամ հանցափորձին հանցակցելը»:

Ինչ վերաբերում է հանցագործության միջնորդավորված կատարմանը, ապա դրա օրենսդրական սահմանումը պետք է բխեցվի հանցագործության կատարման վերոնշյալ բնորոշումից: Այսինքն՝ հանցագործության միջնորդավորված կատարումն պետք է համարել՝

1) ավարտված հանցագործության միջնորդավորված կատարումը,

2) հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի միջնորդավորված կատարումը,

3) ավարտված հանցագործությանը կամ հանցափորձին միջնորդավորված հանցակցելը:

Փաստորեն, «հանցագործության միջնորդավորված կատարում» հասկացությունն իր ծավալով ավելի լայն է, քան «կատարողի արարք» հասկացությունը: Նախ՝ հանցագործության միջնորդավորված կատարումը հնարավոր է ոչ միայն հանցակցության կազմում, այլև հանցանքը միանձնյա կատարելու դեպքում: Բացի այդ, հանցակցության կազմում հանցագործության միջնորդավորված կատարում հնարավոր է ոչ միայն կատարողի, այլև մյուս հանցակիցների կողմից: Օրինակ՝ օժանդակողը սպանության կատարման համար թույն է տալիս քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձին, որպեսզի վերջինս այն փոխանցի կատարողին: Այս դեպքում ևս առկա է հանցագործության միջնորդավորված կատարում՝ միջնորդավորված օժանդակության ձևով:

Ուստի հանցագործության միջնորդավորված կատարման օրենսդրական բնորոշումը պետք է դուրս բերվի ոչ միայն կատարողի հասկացությունից, այլև հանցակցության ինստիտուտի շրջանակներից ընդհանրապես:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կարող են նպաստել քրեական օրենսդրության ճիշտ կիրառմանն ու արդյունավետությանը:

ПЕРСПЕКТИВЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ОПРЕДЕЛЕНИЯ ИСПОЛНИТЕЛЯ ПРЕСТУПЛЕНИЯ

Լալա Գրիգորյան

Учебный ассистент кафедры уголовного права и криминологии юридического факультета академии Образовательного комплекса полиции Республики Армения, капитан полиции

Статья посвящена перспективам совершенствования законодательного определения исполнителя преступления. В результате системного анализа уголовно-правовых норм, определяющих понятия соучастия, исполнителя преступления, неосторожного преступления и приготовления к преступлению, автором обосновывается, что согласно действующему законодательному регулированию, исполнителем преступления не может считаться лицо,

совершившее неосторожное преступление, лицо, совершившее приготовление к преступлению, а также лицо, совершившее преступление единолично. В заключительной части статьи автором изложены конкретные законодательные предложения, направленные на совершенствование понятия исполнителя преступления.

PERSPECTIVES OF IMPROVEMENT OF LEGISLATIVE DEFINITION OF PERPETRATOR OF CRIME

Lala Grigoryan

Academic assistant of the Criminal Law and Criminology Chair of the Law Faculty of the Academy of the RA Police Educational Complex, Police Captain

The article is devoted to the perspectives of the improvement of the legislative definition of the perpetrator of crime. As a result of the systematic analysis of the criminal-legal norms determining the concept of complicity, the perpetrator of crime, careless crime and preparation to a crime, the author substantiates that according to the current legislative regulation, the person committing a careless crime, the person committing preparation to a crime, as well as the person committing a crime single-handedly cannot be considered as the perpetrator of the crime. In the final part of the article the author outlines specific legislative proposals aimed at the improvement of the concept of a perpetrator of crime.

Բանալի բառեր – հանցագործություն, հանցակիցներ, կատարող, անզգույշ հանցանք, հանցագործության նախապատրաստություն, միայնակ գործող անձ, հանցագործության սուբյեկտ, քրեական պատասխանատվության հիմք, հանցագործության միջնորդավորված կատարում

Ключевые слова – преступление, соучастники, исполнитель, неосторожное преступление, приготовление к преступлению, лицо, действующее единолично, субъект преступления, основание уголовной ответственности, посредственное исполнение преступления

Key words – crime, accomplices, perpetrator, careless crime, preparation to a crime, a single-handedly acting person, subject of crime, the basis of criminal responsibility, mediocre perpetration of the crime